ՀՀ Մանկության դատարանի 19.12.2023թ. թիվ ՄնԴ/1541/04/23 վճռով սնանկ ճանաչված Արման Աշոտի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող և գրավադրված անշարժ գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-06 17:04:20

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

02.10.2026թ. ժամը 15։00-ին, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 65ա հասցեում /8-րդ հարկ, 805 սենյակ/ հայտարարված Արման Աշոտի Ավետիսյանի գույքի բաց աճուրդը համարվել է չկայացած:
04.12.2026թ. ժամը 15։00-ին, ՀՀ Սնանկության դատարանի 19.12.2023թ. թիվ ՍնԴ/1541/04/23 վճռով սնանկ ճանաչված Արման Աշոտի Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Պետրոսյանի կողմից, հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 08.08.2024թ. որոշումը, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 65ա հասցեում /6-րդ հարկ, 8 սենյակ/ կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 19.12.2023թ. թիվ ՍնԴ/1541/04/23 վճռով սնանկ ճանաչված Արման Աշոտի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող և գրավադրված անշարժ գույքի բաց աճուրդը:
Աճուրդի ներկայացված թիվ 1 լոտի մեկնարկային արժեքը 10 տոկոսով նվազեցված է նախորդ աճուրդի մեկնարկային արժեքից և կազմում է.
Լոտ 1 - ՀՀ, ք Երևան, Կենտրոն, Չարենցի փողոց, թիվ 155 հասցեում գտնվող անշարժ գույք /122,05 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 0,01556 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամաս, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2742847, տրված 24.03.2010թ./- մեկնարկային արժեքը կազմում է 18.679.900 (տասնութ միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար իննը հարյուր) ՀՀ դրամ:
Գնորդը կատարելու է գույքի գրանցման, ձևակերպման, ինչպես նաև բնակիչների վտարման հետ կապված ծախսերը:
Գույքի աճուրդը կանցկացվի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի ՝ 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանի համաձայն:
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի

հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, մինչև 27.11.2026թ. ներառյալ, կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Օտյան 53/2 հասցեում գտնվող ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:

Արման Աշոտի Ավետիսյանին աճուրդ 04.12.2026թ..pdf

37477191076

artakvarpet@mail.ru

ԿՈՏԱՅՔ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 6 ԹՂՄ., 16, 23